

Եկեղեցու հետ միասին Մանթաշեանց շինեց նաև նրան կից Առաջնորդարանի շէնքը:


Մանթաշեանց Պարիզի եկեղեցու վրայ ծախած է 1,100,000 Փրանք, ընդ ամէնը, որից 450,000 Փր. վճարուած է միայն հողի համար: Շատերը գտնում էին այն ժամանակ թէ կարելի էր աւելի ընդարձակ գետին ձեռք բերել Պարիզում, այդ գնով եւ աւելի յարմար տեղ հայ եկեղեցու համար, բայց Մանթաշեանց կամեցել էր, որ հայ խաչն ու ճարտարապետական ոճը փայլի մայրաքաղաքի ամենաճոխ եւ ամենաթանգ վայրում եւ բոլորը խոնարհուել էին նրա այս բողոքներին առջեւ, որ անշուշտ ունէր իր արդարանալի կողմը:

Պարիզի հայ եկեղեցին արձանագրուած է քաղաքում իբրև Աղ. Մանթաշեանցի անձնական սեպհականութիւնը: Մանթաշեանց իր կենդանութեան ժամանակ մտածել էր թէ ինչ միջոցների պէտք էր գիտնել, որպէս զի իր հիմնած ազգային տաճարը մահիցը վերջ Ազգի կամ Հայ եկեղեցու անուան փոխանցուի: Նա այս մասին նոյն իսկ Օրմանեան պատրիարքի խորհուրդն էր հարցրել եւ Օրմանեան զբաղուել է այս խնդրով, ասանց որ եւ է եզրակացութեան գալու:

Այնուհետեւ այս մասին որ եւ է լուրջ ձեռնարկ չէ եղած, մանաւանդ որ փոխանցումը մեծ ծախքի էր կարօտ: Այսպէս թէ այնպէս Փրանսական օրէնքի առջեւ եկեղեցին մնում է դեռ Մանթաշեանցի անուան, որ նշանակում է նրա ժառանգների սեպհականութիւնը, անուանապէս:

(Շարտանակելի:)

ՍԱՐՈՒՅԵՆ



յետոյ կատակի ձեւով նկատում է թէ արդեօք «տէր-տէրն» այդ օրն ուրիշ բան չէր կարող կարգաւ Աւետարանից, որ ակնաբերութիւն չլինէր հարուստներին»:

ՍՏԵՓԱՆ ԷԼՄԱՍ

Ստեփան Էլմաս մին է այն մեծ հայերէն, որոնք հայ ազգին ստեղծագործող հանճարին ներկայացուցիչներն են օտար ազգերու քով:

Իբրև տաղանդաւոր երաժիշտ՝ ունի այնպիսի արժէքաւոր երկեր, որոնք կրնան իրաւամբ մեծ վարպետներու արտադրութիւններուն կից յիշատակուիլ:

Ուրախութիւնն ունիմ ներկայացնելու հոս հայ տաղանդաւոր երաժիշտիս համառօտ կենսագրութիւնը, որուն կարեւոր կէտերը կը պարտիմ A. Rapinի աղնութեան, որ երաժիշտին կեանքը մօտէն ճանչցող մըն է:

Ստեփան Էլմասեան աշխարհի լոյսը տեսաւ Չմիւռնիայի մէջ, 25 Դեկտեմբեր 1864ին: Ան անուանի եւ շատ յարգուած ընտանիքի մը շտաւելոյն է: Մանուկ հասակէն սկսեալ անօրինակ ուշիմութիւն մը ցոյց տուաւ, եւ հակադրաբար յառաջադիմեց իր ուսումներուն մէջ:

Մատաղագոյն հասակին իսկ իր մէջ բերում կար դէպի երաժշտութիւն: Կը պատմեն, թէ տակաւին ութ ամսական էր, երբ լսելով դաշնակի նուագը կը բարձրացնէր գլուխը դայեակի ծոցէն, ունկնդրելու համար նուագի զուարթ խաղերուն: Հաղիւ կեանքի վեցերորդ զարուճը կոխած՝ կը սկսի արդէն դաշնակի դասեր առնել: Քանի մը տարի յետոյ վարպետը մանուկ էլմասի հօրը կը ներկայանայ, յայտարարելու թէ ինքը չունի իւր աշակերտին սորվեցնելու նոր բան մը, որովհետեւ անիկա իւրացուցած է արդէն իր բոլոր դիտցածները:

Դեռ 13 տարեկան էր, երբ Չմիւռնիայի մէջ կը մասնակցի համերգի մը, արուած բարեգործական նպատակի համար, ուր Lisztի մէկ ռապսոդիան կը նուագէ, ներկաներու վրայ անսահման խանդավառութիւն մը յառաջ բերելով: Lisztի, այդ հոյակապ վարպետի, գործերէն հմայուած մոգուած էր պատանի էլմասեան. անոնք իր յաճախակի ուսումնասիրութիւններուն առարկայ կ'ըլլային, գործնք կը ներկայացնէր դաշնակի վրայ նորանշան դիւրութեամբ եւ ոգեւորութեամբ:

Հակառակ երաժշտութեան մէջ երեւան բերած այս ընդունակութեան, կ'որոշէ Հայրը, որ պատանին վաճառականական ասպարէզին նուիրուի: Բայց անիկա չհրաժարեցաւ իւր բնածին կոչումէն. շարունակեց հետեւի իր

արտի բերումին: Կրնա՞յ ջուրը հոսանքին հակառակ ուղղութեան ընթանալ:

Ստ. Էլմասի հօրեղբայրներէն մին, լուսամիտ անձ մը, որ հիացող մըն էր պատանւոյն ընդունակութիւններուն վրայ եւ կը գուրգուրար անոր տաղանդին վրայ, միջամտեց իր եղբոր քով. եւ խրախոյս կարգաց պատանւոյն՝ յարգել երաժշտական կոչումը:

Հօրեղբայրը դեռ աւելի յառաջադէմ քայլ մ'առնելով՝ իրագործեց Ստեփանի ամենաջերմ փափագը՝ տեսնել Լիստը եւ ծանօթանալ անոր հետ: 1879 յուլիսին հասան Վայմար եւ ներկայացան մեծահամբաւ Վարպետին: Լիստ վերահասու եղաւ շուտով պատանւոյն քանքարին եւ քաջալերեց զանիկա:

Վիեննայի մէջ յառաջ տարաւ Էլմասեան իր սիրական ուսումները: Իր դաշնակի վարպետն էր Anton Door, իսկ երգայարգարութեան առաջնորդը Franz Krenn: Իր յառաջադիմութիւնը մեծաքայլ


էր: Որովհետեւ շախմատի գրգայուն էր իր բնութիւնը, չկրցաւ առկալ այն տարեւոր անդուլ տքնութիւններուն, զորոնք կը պահանջէր ուսումը. Ստեփանի ստողջութիւնը քայքայեցաւ. ստիպուեցաւ բժիշկներու խորհրդով Չմիւռնիա վերադառնալ: Ո՞րքան ցաւ պատճառեց իրեն ուսումներէն բաժնուիլը: Բայց արեւելքի արեւն եւ ընտանեկան միջավայր կազդուրեցին շուտով իր տկար ոյժերը, այնպէս որ քանի մ'ամիս ետքը Վիեննա վերադառնալու ուրախութիւնն ունեցաւ:

Այս երաժշտասէր Ոստանն իր զարգացման վրայ շատ աւելի ազդեց, քան իր ուսու-

ցիչներու խորհուրդները: Երիտասարդ երաժշտագէտը այն աստիճան յառաջադիմած էր իւր ճիւղին մէջ, որ այլ եւս չէր շահագրգռուէր դասախօսութիւններէն. մասնաւորապէս դժպիտ էր իրեն A. Door:

1882ին Ստեփան Էլմաս շարադրեց իր անդրանիկ գործը՝ Six Etudes. Լիստի նուիրեց դայն: Յաջորդ տարին մեկնեցաւ Վայմար, լսելու Լիստի խորհուրդները: Նոյն տարին հանեց հրապարակ Poèmes կոչուած նուագները եւ V. Hugoի ձօնեց, որուն հիացողներէն էր:

Հօրը հիւանդութեան անստոյգ վիճակը հարկադրեց զինքը միւսանգամ Չմիւռնիա երթալ, ուր իր հօրեղբայրը, եւ քիչ յետոյ նաեւ հայրը կորսնցընելու դառն վիշտըն ունեցաւ: Պարագանքը զինքը ընտանեկան հոգերուն կապեցին: Էլմաս օրինակելի կերպով կատարեց իր այդ նուիրական պարտականութիւնները:



ՍՏԵՓԱՆ ԷԼՄԱՍ

Ժամանակ մը յետոյ Ստեփան իր սիրական դրաղուններուն վերադարձաւ: Իր լուագոյն ստեղծագործութիւնները այս շրջանէն կը սկսին: Բայց նորանոր վշտեր պատճառ եղան դարձեալ ընդհատելու աշխատանքները. վախճանեցաւ իր մօրաբոյրը, որ իր մատաղ հասակին կորսնցուցած մօր փոխարէն մայր եղած էր իրեն. քիչ ետքը մեռաւ նաեւ խորթ մայրը: Այս բարոյական հարուածներու պատճառով վշտին ներքեւ՝ իր զգայնութիւնն աւելի երեւան եկաւ. եւ արտադրութիւններն ա՛լ աւելի ձգիչ դարձան: Հանգամանքները կը ստիպէին զինքը դեռ Չմիւռնիա մնալ: Արեւու, բոյրերու եւ

անընդհատ այդ հայրենիքը ուրիշ կողմէն բարերար ազդեցութիւն մը գործեց անոր բնութեան վրայ. այլևս հմայիչ սկսած էր դառնալ...

Եւրոպան զինքը նորէն իրեն կը կանչէր: Դեռ չմեկնած Զմիւռնիայէն՝ հասարակութեան թախանձագին խնդրանքներուն վրայ համերգ մը տուաւ, որ հրաժեշտի համերգ մ'եղաւ:

Նախ Վրեննա եկաւ (1886), ուր իր առաջին նուագահանդէսը տուաւ, ցուցադրելով իր սեպհական ստեղծագործութիւնները: Ունեկները զիւրեւորած՝ ծափահարութիւններով կ'արտայայտէին իրենց հիացմունքը...

Այնուհետեւ շրջագայեցաւ երգահանը Եւրոպայի այլ եւ այլ քաղաքներ. ի մէջ այլոց տուաւ Պարիս շարք մը երգահանդէսներ, որոնք ծափահարութիւններու արժանացան:

Այս շրջագայութիւնը սակայն չէր յարմարեր իր բնութեան. կամաց կամաց ամփոփուեցաւ որոշ կենդրոններ: Նոյնպէս շատ նուագ տրամադրութիւն ունէր ուսուցանելու...

Շատ տեղեր ապրեցաւ Ստեփան Էլմաս. բայց ամէնէն աւելի յանդուրժեց երեցաւ իրեն Գաղղիա եւ Զուիցերիա: Ժընէվի մէջ կ'ապրէր վերջին 15 տարիներս. լսողութեան հիւանդութիւն մը արգելք կ'ըլլայ իրեն դժբախտաբար հրապարակի վրայ երեւնալու:

Իր ստեղծագործութիւնները դաշնակահարութեան ամէն սեռերը կը պարփակեն: Առանձին ուսումնասիրութիւն մը հարկ պիտի ըլլար գրել, եթէ ուզէինք խօսիլ մանրամասնորէն իր հանճարին այս արտադրութիւններուն վրայ: Գաշնակի համար յօրինած իր գործերը հոյակապ են եւ կ'օթողական:

«Այս շատ համառօտ կենսագրութիւնը աւարտելէն յառաջ, կ'ըսէ A. Rapin, շահեկան կը համարիմ կցել իմ գնահատանքս արուեստաւորիս մասին, վասն զի զինքը

իրբեւ բարեկամ ճանչնալու երջանկութիւնն ունեցած էմ եւ երկար տարիներ իրեն հետ ապրած: Այսպէս կը գնահատեն զինքը նաեւ անոնք, որոնք զինքը անձնապէս ճանչնալու առանձնաշնորհութիւնն եւ հաճոյքն ունեցած են: Ստեփան Էլմաս կորովի մարդ մըն է, տիրական միտք մը, բայց միանգամայն չափազանց բարեսիրտ, մանաւանդ հանդէպ տկարներու: Սրամիտ է եւ իրերու խորքը թափանցող, ան բարձրէն ու հեռուէն կը տեսնէ: Թէեւ երազուն, մեղամաղձօտ բնութիւն մ'ունի, բայց իր խանդովը խօսակցութիւններ կը հրահրէ:

Այս մեծ բանաստեղծին երգահանած կտորները դաղափարներու ճոխութիւն եւ անսպառ բեղմնաւորութիւն մ'ունին. անոնց անուղական հրապոյրը սաստիկ կը մոգէ. զօղուած է ոյժի մը հետ, որ ինքնաբերական աղբիւր մըն է եւ վերէն կը հոսէ: Երբ դաշնակի վրայ իր հանճարին երգը կը հնչեցնէ, այդ կախարհ վirtuoseը իր մոգական տիրապետութեան կ'ենթարկէ հասարակութիւնը, որ պահ մը առկա կը մնայ անոր ինքնատիպ ու գեղեցիկ անձնաւորութենէն:

Անմասն խառնուածք մըն է անիկա: Ստեփան Էլմասի գործն արուեստի հարգատ եւ ինքնարուն պահանջներուն լրութիւնն է»:

Բացի համազգային, եւրոպական ճաշակին ներդաշնակող երգերէ եւ նուագներէ, որոնց մեծագոյն մասը շրջան կ'առնէ այժմ հրապարակի վրայ, Ս. Էլմաս ունի նաեւ հայկական, հայրենի ճաշակին նուիրուած կտորներ, որոնք դժբախտաբար մնացած են անտիպ:

Այս տեղ կարելոր կը համարիմ տալ ցանկ մը Ս. Էլմասի գործերուն, որոնք կարող են հետաքրքրել երաժշտասէր ազգայինները:

- Ա. ՏԱՐԻ
Ballade Nr. 1 Mazurka Nr. 1-2
Barcarole Nr. 1 Mazurka Nr. 3-5
Berceuse Nr. 1 Nocturne Nr. 1
Etude Nr. 1-6 Nocturne Nr. 2
Impromptu Nr. 1 Präludium Nr. 4-6
Konzert Nr. 1 mit Orchesterbegleitung Valse Nr. 1

- Բ. ՏԱՐԻ
Ballade Nr. 2 Nocturne Nr. 4
Danse mélodique Nr. 1 Nocturne Nr. 5
Konzert Nr. 2 mit Orchesterbegleitung Präludium Nr. 7-12
Mazurka Nr. 8-9 Sonate Nr. 1
Mazurka Nr. 10-11 Valse grande

- Գ. ՏԱՐԻ
Danse mélodique Nr. 2 Nocturne Nr. 3
Danse mélodique Nr. 3 Polonaise Nr. 1
Impromptu Nr. 2 Präludium Nr. 13-15
Mazurka Nr. 6-7 Valse Nr. 2
Mazurka Nr. 12-13 Valse Nr. 3

(Այս Գ. շարքը միայն Պարիս հրատարակուած է, միւսները Steingräberի քով:)

- Գ. ՏԱՐԻ
Poesien:
Aubade Eglogue
Aubade II Elégie
Ballade Idylle
Chanson Ode
Chanson II Romanze
Chant Sonnet
Chant II Stances
Complainte

- Ե. ՏԱՐԻ
Bolero Nr. 1 Polonaise Nr. 3
Danse mélodique Nr. 4 Präludium Nr. 16-18
Konzert Nr. 3 mit Orchesterbegleitung Sonate Nr. 1
Mazurka Nr. 14-17 Tarantelle
Mazurka Nr. 18-19 Valse Nr. 4
Nocturne Nr. 6 Valse grande Nr. 5
Polonaise Nr. 2

- Զ. ՏԱՐԻ
Andante cantabile e Mazurka Nr. 22-24
Rondo pastorale mit Nocturne Nr. 7
Orchesterbegleitung Polonaise Nr. 4
Barcarole Nr. 2 Präludium Nr. 19-21
Bolero Nr. 2 Scherzo Nr. 2
Danse mélodique Nr. 5 Sonate Nr. 3
Fantaisie-Mazurka Valse grande Nr. 6
Mazurka Nr. 20-21 Valse Nr. 7

- Է. ՏԱՐԻ
Arabesque Rondo
Berceuse Nr. 2 Sonate Nr. 4
Fantaisie Valse Nr. 8
Impromptu-Mazurka Valse Nr. 9
Marche funèbre Trio in B-Dur für Klavier, Violine und Violoncello
Mazurka Nr. 25-27
Polonaise-Fantaisie Quartett in D-Moll für Klavier, Violine, Viola und Violoncello
Polonaise Nr. 5
Polonaise Nr. 6
Präludium Nr. 22-25

- ԱՆՏԻՊ ԳԱՐՄԵՐ
Piano et Orchestre:
Pièce de Concert (Konzertstück) Romanze

- Piano:
2me Fantaisie 3me Scherzo
3me Impromptu 2me Arabesque

- Méodies arméniennes:
Mélodie I, Patrie
Mélodie II, Douleur
Mélodie III, Vision
Mélodie IV, Amour
Mélodie V, Sur le lac de Van
Mélodie VI, Paysanne et Paysan
Mélodie VIII, Langueur
Mélodie VIII, Danse sacrée
Mélodie IX, Tristesse
Mélodie X, Espoir
Mélodie XI, Danse mélodique
Mélodie XII, Attente

Piano et Chant:

Martyre Offrande
Ս. Էլմաս բացառիկ երեւոյթ մըն է հայ երգահաններու թուին մէջ. ան նուիրուած դասական երաժշտութեան, իւր ինքնատիպ արուեստովը տեղ մը գրաւած է եւրոպական երգահաններու դասին մէջ: Եթէ իւր ստեղծագործութիւնները պատիւ կը բերեն սեպհական անուան եւ կը հռչակեն իւր համբաւը քաղաքակիրթ ազգերու մէջ, առանց տարակուսի ան պարծանքը պիտի մնայ նաեւ իւր ցեղին, փառքը հայ անուան:

Եւ հայ երաժշտասէրները, որոնք հետամուտ են դասական հեղինակներու գործերուն, ինչպէս կը յուսանք, պիտի գտնեն ճաշակ եւ բաւականութիւն նաեւ Ստեփան Էլմասեանի ստեղծագործութիւններու մէջ, որոնց թրթուսները զգալի պիտի ընեն հայ ախանջին եւ հայ սրտին՝ խաղերը հայ ոգւոյն, որ արտադրիչն է եւ արտայայտուողը:

Հ. Ա. ԳԱՐՄԱՆԵԱՆ



Ս. ԲԱՐԱՆԵԱՆ, Հայաստանի լեռներու աւանդութիւնները: Հրատարակութիւն «Սահակ-Մեսրոպ» տպագրատան: Գահիրէ 1931, 80, էջ 152: Գին՝ 10 Լ. դ.:

Գողտրիկ գիրք մըն է՝ հայ բնաշխարհի լեռներուն ժողովրդական աւանդութիւններու նուիրուած: Ամէն հայ, որ հայրենաբաղձ սրտով մը Հայաստանի կը տենչայ, չափով մը յագուրդ եւ սրտի գովացում պիտի գտնէ, երբ Բարախեանի այս հրատարակիչ գրքովը կարդայ:

Շատ բան արդէն ուրիշ գրքերու եւ հանդէսներու մէջ լցու տեսած է, որոնցմէ Բարախեան այժմ հատընտիր հաւաքածոյ մը կ'ազմած կ'ընծայէ հասարակութեան:

Բնական է որոշ նպատակ մը ունեցած է հեղինակը. հայրենի աւանդութիւնները ժողովուրդին ներկայացնել՝ ժողովրդական կերպով: Եւ այս գեղեցիկ նպատակը շատ լաւ յաջողած է:

Հ. Ա. ԳԱՐՄԱՆԵԱՆ

1 Ս. Էլմասի գործերու հրատարակիչն է Steingräber-Verlag, Leipzig, C. 1, որուն պէտք է գիմեն ստանալ ցանկացողները: